

**Ինտերակտիվ կրթության**

**զարգացման**

**հիմնադրամ**

**ՋԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ**

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

**ԴԱՍԸՆԹԱՑ 2022.**

## **Ջետազոտական աշխատանք**

**Թեմա**-Ժամանակակից

տեղեկատվական

տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների  
զարգացման մեջ

**Ջեղինակ** -Արմենուհի Արսենյան

**Մարզ**-Արագածոտն

**Ուսումնական**

**հաստատություն**-Մելիքայուղի

միջնակարգ դպրոց

Ապարան 2022

## Բովանդակություն

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ -----

2

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և  
դերը երեխաների հոգեբանական զարգացման  
մեջ-----3

Դպրոցական կյանքում հիմնական անցումային փուլեր և երեխայի  
զարգացման  
առանձնահատկությունները-----6

Մաս 1: Հեռուստացույցը և  
երեխան-----10

Մաս - 2: Հեռախոսը և երեխան Բջջային հեռախոսների ճառագայթումները և  
ազդեցությունը - -----  
-18

Եզրակացություն - -----  
20

Գրականություն - -----  
22

## ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցումը այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել. տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ անհրաժեշտության և ցանկության:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքները այժմ առաջանում են ոչ միայն խաղից, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ևս մեծ դեր և ազդեցություն ունեն երեխաների հոգեբանական զարգացման մեջ, որոնք իրենց հերթին նպաստում են երեխաների ավելի հեշտ ինտեգրմանը և նյութերի յուրացմանը:

SՅՏ-ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում դասապրոցեսում: Կրտսեր դպրոցի ինֆորմատիզացիան կարևոր դերակատարություն ունի կրթության

ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար:

## **Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների հոգեբանական զարգացման մեջ**

Դպրոցահասակ երեխայի անձի զարգացման հիմնական օրինաչափություններն ու առաձևահատկությունները, երեխայի հոգեբանական զարգացումը

Յուրաքանչյուր ուսուցիչ մանկավարժի գործունեության ընթացքում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցումը այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով՝ երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից՝ դրդված լինելով ցանկության պահանջմունքից, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է նրան մանկության աշխարհ, որտեղ ամենուր ապահով է, չկան որոշակի պարտավորություններ և պահանջներ: Կրտսեր դպրոցականի

զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամաձինության ձևավորումը (պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում): Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում շատ կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ:

Ուսուցիչը կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է: Ողջ համակարգում կարևոր դեր են կատարում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3-րդ դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային է նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Այդ պատճառով ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխային:

Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի հետ, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Այստեղ կարևորվում է մեծահասակի դերը, 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում, վատն ու լավը փոխարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ:

Ձևավորվում է կամքը, որը անընդհատ գործընթաց է, քանի որ ուսումնական գործունեության ողջ ընացքում երեխայի առջև դրվում են նորանոր նպատակներ:

### **Իմացական ոլորտի զարգացում**

Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է հիշողությունը: Աշակերտին անհրաժեշտ է մտապահել մեծ քանակությամբ ինֆորմացիա և վերարտադրել այն:

Չտիրապետելով հատուկ հմտությունների երեխան հիշում է մեխանիկորեն, սակայն մեծ քանակի նյութի մտապահման դեպքում դա հետզհետե դժվարանում է:

Ուսումնական գործընթացը՝ գտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում: Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կազմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի իդեալականությանը, երևույթների ճանաչմանը, հասկացմանը և այլն:

Այս տարիքում առաջնային պլան է մղվում մտածողության զարգացումը: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: Առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը ստիմուլացնում է վերացական մտածողության զարգացում, երբ հստակ արտաքին առարկաների հետ գործ ունենալուց երեխան անցնում է մտավոր պլանում դատողությունների կատարման: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները:

Մենք՝ ուսուցիչներս, օժանդակում ենք այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր (գրքերի ընթերցում , ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում), ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ. ձևավորելով բավարար բառապաշար, գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջ և այլն: Այս տարիքում կան ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործողություն է:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝

- իմացական ոլորտի զարգացում
- աֆեկտիվ-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով:
- հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում
- երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում

### **Դպրոցական կյանքում հիմնական անցումային փուլեր և երեխայի զարգացման առանձնահատկությունները**

Չանգուցային բառեր: կրտսեր դպրոցականի հարմարում, հարմարման մակարդակներ, հարմարմանը նպաստող գործոններ, դպրոցի հոգեբանական պատրաստվածություն, միջին դպրոցի հարմարում, ուսումնական մոտիվացիա: Գոյություն ունեն հարմարման տարբեր մակարդակներ.

1. բարձրամակարդակ՝ առաջին դասարանցին դրական է վերաբերվում դպրոցին, ներկայացվող պահանջների հանդեպ ունի ադեկվատ վերաբերմունք, հեշտ է յուրացնում դպրոցական նյութը, խորքային և լիարժեք ընկալում այն: Կարողանում է լուծել բարդեցված խնդիրներ, պատասխանատու է կատարում է հանձնարարությունները, հետաքրքրություն է ցուցաբերում, հաճույքով է հաճախում դպրոց:
2. հարմարման միջին մակարդակ՝ առաջին դասարանցին հաճույքով է հաճախում դպրոց, հասկանում ուսուցչի հրահանգները, հեշտ է յուրացնում ուսումնական նյութը: Եթե ուսուցչի բացատրությունները հստակ են և ակնառու, կենտրոնացած է: Եթե նյութը հետաքրքրում է իրեն՝ կարողանում է լուծել տիպական խնդիրներ, սակայն մեծահասակի վերահսկման դեպքում ընկերություն է անում դասարանցիների հետ, պարտաճանաչ է:
3. ցածրամակարդակ՝ երեխան բացասաբար կամ անտարբեր է դպրոցի հանդեպ: Հաճախ սկսում է հիվանդանալ, գերակայում է ճնշված տրամադրությունը, բացատրված նյութը յուրացնում է ոչ լիարժեք, ամբողջովին: Դասագրքի հետ ինքնուրույն աշխատանքը դժվար է, անհրաժեշտ է մշտական վերահսկողություն: Բացակայում է մոտիվացիան, հետաքրքրությունը: Ձգտում է երկարատև հանգստի դադարների և այլն:

Հարմարման դժվարություններ ունեցող երեխաները կարող են դրսևորել տարաբնույթ վարքաձև, ունենալ բազմաթիվ խնդիրներ: Ոմանց կարելի է բնութագրել որպես անուշադիր, կենտրոնացման դժվարություններ ունեցող, կանոններին չենթարկվող: Որոշ երեխաների մոտ սկսում է գերակայել



տազնապալիությունը, տրամադրության անկումը, նրանք հաճախ հուզվում են, լաց լինում:

Չարմարմանը նպաստում է հանգիստ, հարգալից և համբերատար մոտեցումը երեխային:

Չմուտ ուսուցիչները անհատական մոտեցում են ցուցաբերում աշակերտներին: Չաճախ ֆիզիկական դադարներ իրականացնում, ծանոթացնում դպրոցական կանոններին, վեր հանում յուրաքանչյուրի խնդիրները և փորձում լուծումներ գտնել: Չաճախ առաջին դասարանցիները իրենց հետ խաղալիքներ 1 բերում, ինչը կապաղ օղակ է տան և դպրոցի, մանկության և հասուն կյանքի, ուստի ուսուցիչը չպետք է պատժի այս արարքը, այլ ընդունի և հասկանա երեխայի պահանջմունքները:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ևս մեծ դեր և ազդեցություն ունեն երեխաների հոգեբանական զարգացման մեջ:

Այսօր հստակորեն շեշտադրվում է երեխայի ուսուցման և դաստիարակության մարդասիրական բնույթը: Նշված հիմնախնդիրների լուծման կարևոր ուղիներից է մանկավարժական նոր տեխնոլոգիաների ներդրումը: Ապագա մանկավարժին այսօր անհրաժեշտ է կողմնորոշվել ուսուցման գոյություն ունեցող տեխնոլոգիաների մեջ, ծանոթանալ մանկավարժության,

հոգեբանության նորագույն նվաճումներին, որոնք ուղղված են արդեն իսկ գոյություն ունեցող տեխնոլոգիաների կատարելագործմանն ու արդիականացմանը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ստեղծմանը:

Ուսուցման և դաստիարակության գործընթացների տեխնոլոգացումը կապվում է այնպիսի դիդակտիկ մոտեցումների որոնմանը, որոնք կարող են ուսուցումը վերածել ինքնատիպ «արտադրական-տեխնոլոգիական գործընթացի՝ երաշխավորված արդյունքով»:

«Մանկավարժական տեխնոլոգիա» հասկացության հատկանշական գծերն են համարվում՝

- Կոնկրետ մանկավարժական մտահաղացումների մշակումը արժեքային կողմնորոշումների հիմքի վրա
- մանկավարժական գործողությունների տեխնոլոգիական շղթայի այնպիսի կառուցումը, որ այն համապատասխանի դպրոցական նվաճումներին և պետական կրթության չափորոշիչներին և ապահովի յուրացման անհրաժեշտ մակարդակ
- ուսուցչի և աշակերտների փոխկապակցված գործունեությունը՝ կախված աշակերտի ուսումնական պահանջմունքներից և համապատասխան յուրաքանչյուրի անհատական առանձնահատկություններին
- կանխատեսող պրոցեդուրաներ, որոնք պարունակում են չափանիշներ, ցուցանիշներ և գործողություններ՝ գործունեության արդյունքը որոշելու համար:

Ասված խոսքը, վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Կրտսեր տարիքի մյուս առանձնահատկությունը ընդօրինակումն է:

## **Մաս 1: Հեռուստացույցը և երեխան**

### **Հեռուստացույցը ուսուցողական հզոր գործիք՝ «բարեկամ»**

Բոլորիս ընտանիքներում իր պատվավոր տեղն է զբաղեցնում հեռուստացույցը, որպես մեր կենցաղի ամենօրյա ուղեկից: Հեռուստացույց դիտելը դարձել է այնքան հարազատ բան, որ մենք նույնիսկ կասկածի տակ չենք դնում նրա օգտակարությունը/վնասակարությունը: Հեռուստատեսության առավելությունն այն է, որ նա «պատուհան է դեպի աշխարհ», դիտողին կապում է աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հետ, ինչ-որ իմաստով դարձնում է դրանց մասնակիցը: Այդ իմաստով հեռուստատեսությունը կարող է մեծ ներդրում կատարել շատ խնդիրներ լուծելու և մեր հոգևոր հորիզոնն ընդլայնելու հարցում հասնել ցանկալի արդյունքի:

### **Հեռուստացույցի բացասաբար ազդեցությունը կամ հեռուստացույցը՝ «թշնամի»**


Գիտնականները վստահեցնում են, որ հեռուստացույցի առջեւ երկար նստելը վնասակար է երեխաների համար: Ճատ երեխաներ իրենց օրն անցկացնում են Էկրանի առջեւ ժամերով նստած:

Հեռուստացույցը ստեղծում է հիպնոտիկ մի դաշտ, որն էլ ստիպում է երեխաներին ժամերով գամվել Էկրանին:

### **Հեռուստացույցը բացասաբար է անդրադառնում երեխայի երևակայության վրա**

Հեռուստացույցից հրաժարված երեխան ոչինչ չի կորցնում, այլ փրկում է վերը նշված հատկանիշների ձևավորման համար անհրաժեշտ ժամանակը: Երկար

հեռուստացույց դիտելուց երեխայի երեւակայութիւնը սահմանափակվում է: Նրանց նկարած կերպարներն անհամաչափ են, նկարները՝ ավելի սխեմատիկ ու անկենդան:



### **խոսքի ուժը և հեռուստացույցի ազդեցութիւնը դրա վրա**

Երեխան խոսել սովորում է ամառին հերթին՝ ծնողներից: Բացի այդ, միացրած հեռուստացույցի առկայությամբ տանը ծնողների շփումն է դժվարանում: Ծնողներն ավելի քիչ են հետեւում երեխաներին, քիչ են շփվում նրանց հետ, որի պատճառով երեխան մտավոր զարգացում չի ունենում ավելի ուշ է սկսում խոսել եւ ավելի վատ, քան իր հասակակիցները: Դրա հիմնական պատճառը բժիշկները համարում են ընտանիքներում աճող լռութիւնը, որին նպաստող ամենաուժեղ գործոնը հեռուստատեսութիւնն է: Ինչպե՞ս է, որ տեխնիկայով միջնորդավորված խոսքը երեխայի ուղեղին հնարավորութիւն չի տալիս այնպես ձևավորվելու, ինչպես դա անում է կենդանի խոսքը: Սակայն այս ամենը լսելու միայն ամառին փուլն է: Հաջորդ փուլում մկանային շարժումների ակտիվութիւնը փոխանցվում է և խթանում սրտի ու թոքերի ռիթմիկ

գործունեությունը: Սակայն խոսքի այդ բնական ուժը չի: խոսքի ներգործուն այդ շարժումը կարող է առաջանալ միայն մարդկային կենդանի շփման, կենդանի խոսքի ժամանակ: Պարզվում է, որ հեռուստացույցի առաջ ավելորդ ժամանակահատված անցկացնելը ամեն առումով բացասաբար է ազդում երեխաների վրա: Այնուամենայնիվ երեխային չպետք է թույլ տալ 2 ժամից ավել հեռուստացույց դիտել, քանի որ այն վատ է անդրադառնում երեխայի զարգացման ու հասունացման վրա:

Հեռուստացույցից կախվածությանը զուգահեռ մարդկանց մեջ վերանում է գիրք կարդալու ցանկությունը: Խանգարվում է քունը ,նպաստում է ճարպակալմանը, մեծանում է երեխաների շրջանում շաքարախտի առաջացման հավանականությունը

Այն երեխաները. ովքեր չարաշահում են հեռուստացույց(համակարգիչ) դիտելը, ավելի դժվար են քնում, գիշերները հաճախ են արթնանում, մոջավանջներ տեսնում: Այս բոլոր բարդությունները շարունակվում են նաեւ ավելի մեծ տարիքում:

Հետազոտվող բոլոր երեխաների մոտ հիմնական փոխանակությունը, նախնական` հանգիստ վիճակում գտնվելու տվյալի համեմատ, նվազում է 14 %-ով: Կարելի է հասկանալ, որ համապատասխանորեն դանդաղում են նյութափոխանակության գործընթացները նաև ուղեղում: Հեռուստադիտման ժամանակ պուլսը դանդաղում է 10%-ով, կամ ժամում 420 հարվածով: Տղաները (22 տոկոս) ավելի հաճախ են հեռուստացույցի առջեւ ավելի քան 3 ժամ անցկացնում, քան աղջիկները (14 տոկոս):

### **Նպաստում է ագրեսիայի. բռնության առաջացմանը**

Երեխաների հոգեկան կառուցվածքի վրա ազդում է ռեժիսորների կասկածիլի նորամուծությունները դաժանությունը, արյունը, որը անընդհատ հոսում է

հեռուստատեսությանը, սպանությունները: Ազդեցությունն առավել ակնհայտ է թրիլեր եւ մարտաֆիլմեր սիրողների վրա: Եկրանում տեղի ունեցող ագրեսիան եւ բռնությունը ուղեղն ընկալում է որպես իրական: Երբ մարդը պարբերաբար նայում է դաժան սցենարներով ֆիլմեր, տեսարաններ, հուզական արձագանքները նման երեւոյթների նկատմամբ թուլանում են: Տարբեր երկրներում մի քանի տասնամյակ շարունակ կատարված հետազոտությունների հիման վրա գիտնականները և առողջապահության բնագավառի աշխատողները մեծամասամբ գալիս են այն եզրակացության, որ բռնություն դիտելը շատ վտանգավոր է երեխաների համար : Ավելին, շատ հանցագործներ ասում են, որ իրենց վերաբերմունքն ու բռնի վարքը ձևավորվել են հեռուստացույցի ազդեցության ներքո: Ագրեսիվ վարքին կարող են նպաստել համակարգչային բռնի խաղերը, ընկերների և ընտանիքի արժեքներն ու ընդհանուր կենսամակարդակը: Ըստ հետազոտությունների՝ երկար ժամանակ մուլտֆիլմեր դիտող երեխաների մեջ նկատելի է աորտային ճնշման բարձրացում, նման արդյունքներ չեն գրանցվել նույնիսկ համակարգչային խաղերով տարված երեխաների մոտ: Սակայն ինչպե՞ս են այս մուլտֆիլմերն ազդում երեխայի հոգեբանության վրա:Այն ամենը, ինչ նրանք տեսնում են Եկրանին, որպես ճշմարտություն են ընկալում:Մասնագետները հստակ սահմանափակումներ են առաջարկում. Յեռուստացույց դիտել չի խրախուսվում հատկապես մինչև մեկ տարեկան երեխաներին. այդ տարքի երեխաների համար սահմանված է 15 րոպե ժամանակահատված, որը կարալի է անցկացնել մուլտֆիլմեր կամ այդ տարիքի երեխաների համար նախատեսված հաղորդումներ դիտելով:1-ից 3 տարեկան երեխաները հեռուստացույցի մոտ պետք է անցկացնեն 30-ից 40 րոպե և ոչ ավելին: 3-ից մինչև 6 տարեկանը երեխաները օրվա մեջ կարող են հեռուստացույց դիտել 1.30 ժամից 2 ժամ՝ մեծ

ընդմիջումներով: Մինչեւ յոթ տարեկան երեխաների համար հեռուստացույց դիտելու ժամանակը չպետք է գերազանցի օրական 30-40 րոպեն, ավելի մեծ տարիքի երեխաների համար՝ 1,5-3 ժամը: Երեխայի եւ հեռուստացույցի միջեւ եղած հեռավորությունը պետք է հեռուստացույցի Էկրանի անկյունագիծը գերազանցի հինգ անգամ: Օրինակ՝ 72 սմ անկյունագծով Էկրան ունեցող հեռուստացույցը փոքրիկը պետք է դիտի մոտ 3,5 մետր հեռավորությունից: Եթե սենյակի չափերը թույլ չեն տալիս դա իրականացնել, ապա ընտրեք Էկրանի ավելի փոքր տրամագիծ ունեցող հեռուստացույց: Ցանկալի է, որ երեխայի սենյակում հեռուստացույց չլինի: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երեխաները, ովքեր նայում են կրթական հաղորդումներ, ավելի հեշտությամբ են հարմարվում սոցիալական միջավայրում, առաջադեմ են դպրոցում, ունեն ավելի հարուստ բառապաշար:

Ծնողին լսելով՝ երեխան սովորում է արտահայտել իր հույզերը: Դա օգնում է, որ վստահություն ձեւավորվի երեխայի եւ ծնողի միջեւ: Ցանկալի է, որ երեխան մուլֆիլմեր դիտի 3-4 տարեկանից ոչ շուտ, երբ արդեն ընդունակ է հասկանալ ոչ բարդ սյուժեները, քանի որ երեխան նույնացնում է իրեն հերոսի հետ, ցուցաբերում է հերոսին բնորոշ վարք:

### **Արդյո՞ք համակարգչից կախվածությունը հիվանդություն է**

Գոյություն ունեն համակարգչից հոգեբանական կախվածության հետևյալ ձևերը՝ Չամացանցից կախվածություն՝ անձը ստեղծում է վիրտուալ ծանոթություններ և շփումներ, հաճախակի ստուգում էլեկտրոնային փոստը, այցելում երաժշտական ցանցեր և այլն, աստիճանաբար ավելացնելու ցանցում գտնվելու ժամանակը, որի հետևանքով վատնում է ավելի շատ գումար և համակարգչային խաղերից կախվածություն: Ըստ խաղի բնույթի, կարելի է

բաժանել դերային իրականությունից առավելապես կտրված, ոչ դերային նպատակին հասնելու, հաղթելու մոլուցքով համակարգչային խաղեր:

Չետևյալ նշանները վկայում են առաջացած կախվածության մասին անընդհատ օնլայն լինելու ցանկություն, անհանգստություն, ջղայնություն, ագրեսիվություն համացանցի բացակայության պարագայում ուշադրության պակաս անձնական հիգիենային չհետևելը, անառողջ սննդային վարքագիծ, դպրոցական առաջադիմության անկումկռիվներ, , վեճեր տան անդամների հետ համակարգչի պատճառով, իրական մարդկանց հետ շփվելու ցանկության բացակայություն

### **Խորհուրդներ դեռահասներին և ծնողներին**

- տրամադրել օրական երկու ժամից ոչ ավել: Տեղադրել համակարգիչը այնպես, որ հնարավոր լինի հսկել , թե ինչքան ժամանակ է անցկացնում երեխան համակարգչի առջև և ինչպիսի կայքեր է այցելում:

. Չամակարգչի մոնիտորն անհրաժեշտ է տեղադրել այնպես, որ այն գտնվի աչքերի մակարդակին, Էկրանի և աչքերի միջև հեռավորությունը կազմի 50-60 մ: Չեռուստատույցի Էկրանի և դիտողի միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն 2-2,5մ: Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է հաճախ ընդմիջումներ անել և կատարել աչքերի համար վարժություններ:

.Քնի խանգարումները կանխարգելելու նպատակով պետք չէ տեղադրել համակարգիչը, հեռուստացույցը երեխայի ննջասենյակում:



.Անհրաժեշտ է նախազգուշացնել դեռահասին, որ համացանցում տեղադրված տեղեկատվությունը երբեմն վատահեղի չէ:

.Երբեք չի կարելի համացանցով տրամադրել անձնական տվյալներ տան հասցե, հեռախոս, հաշվեհամար, անձնական նկարներ:

.Պետք չէ հանդիպել այն մարդու հետ, ում ճանաչում են միայն համացանցով: Պետք է խրախուսել ծնողներին ազատ ժամանակն անցկացնել երեխաների հետ առանց հեռուստատեսության և համակարգչի՝ զրուցելով, զբոսնելով, մարզվելով և այլն: Պարտվելով՝ հաղթել, այսպես դժվար է կտրվել խաղից: Ծնողներին խորհուրդ է տրվում բացատրել երեխաներին, որ կայքերը կարող են լինել «վատ» և «լավ», որ համացանցում տարբեր մարդիկ են շփվում, որևէ կասկածելի և վատ բան նկատելու դեպքում, տեղեկացնեն ծնողին: Երեխաների առողջության և հոգեկանի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար ցանկալի է, որ ծնողները երեխային բավականին ժամանակ, խնամք և հոգատարություն հատկացնեն: Կարևոր է, որ ծնողները հետաքրքրվեն ոչ միայն երեխայի ուսման հաջողություններով, այլ նաև նրա հնարավոր անհանգստություններով, անհրաժեշտ է միշտ զրուցել երեխայի հետ, հարցնել նրան խնդիրների և երազանքների մասին, կիսվել իր ապրումներով: Խորհուրդ չի տրվում երեխային լիովին ազատություն տալ համակարգչային խաղեր ընտրելիս, որոշ խաղեր անհրաժեշտ է լիովին բացառել:

## **Մաս - 2: Հեռախոսը և երեխան բջջային հեռախոսների ճառագայթումները և ազդեցությունը**

Մինչև վերջին ժամանակները պաշտոնական հաղորդագրություններում նշվում էր, որ բջջային կապի սարքերը բացարձակապես անվնաս են դրանցից օգտվողների համար և լիովին համապատասխանում են բոլոր անհրաժեշտ չափանիշներին: Սակայն վերջին տասնամյակում առաջադեմ բժշկական կենտրոններում ուսումնասիրվում է բջջային հեռախոսներից արձակվող ճառագայթների ազդեցությունը մարդկանց առողջության վրա: Օրեցօր մեծանում են բջջային հեռախոսներից օգտվողների մշտական գանգատները գլխացավերից, ականջացավերի, մաշկի գրգռումից, տեսողության խանգարումներից, գլխապտույտից և սրտխառնոցից: Բջջային հեռախոսների ամենօրյա օգտագործման դեպքում փոխվում է գրեթե բոլոր ներքին օրգանների գործառական վիճակը: Ուստի չի կարելի պնդել, որ բջջային հեռախոսների բացասական ազդեցությունը մարդկանց առողջության վրա բացակայում է: Ճարադրվածից հետևում է, որ բջջային հեռախոսները վտանգավոր են մարդու առողջության համար: Մոտավորապես 3 անգամ մեծանում է լսողական նյարդի բարորակ ուռուցքով հիվանդանալու ռիսկը, հատկապես այն ականջի կողմում, որով սովորաբար խոսում են հեռախոսով: Հեռախոսից գրագիտորեն օգտվելու դեպքում վտանգի աստիճանը կարելի է նվազեցնել: .Էլեկտրամագնիսական ալիքների անկայուն ընդունման պայմաններում հեռախոսի հզորությունն ավտոմատ բարձրանում է մինչև առավելագույն մեծության:

**Ինչպես են բջջայիններն ազդում մեր երեխաների վրա**

Վերջին մի քանի տարիներին բջջային հեռախոսները «գրավել են» միջնակարգ եւ նույնիսկ նախակրթական դպրոցների միջանցքները: Դպրոցականները բջջային հեռախոսները հիմնականում օգտագործում են խաղերի եւ ընկերների հետ շփման համար: Գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ 1-3 տարեկան երեխաների՝ հեռուստացույցով, բջջայինով ու այլ գաջեթներով տարվելը 7 տարեկան հասակում կարող է հանգեցնել ուշադրության կենտրոնացման խնդիրների: Փոքրիկ երեխայի ուղեղը ծնված օրից մինչև երկու տարեկան երեք անգամ մեծանում է չափսերով և շարունակում աճել մինչև 21 տարեկանը: Որպես վերջաբան ներկայացնենք Քրիս Ռոուենի առաջարկած աղյուսակը, որտեղ նշված է տարբեր տարիքների երեխաների համար գաջեթներով զբաղվելու թույլատրելի ժամաքանակը.

Develop mental age	How much	Non-violet TV	Handheld devices	Non-violet video games	Violent video games	Online violent video games or pornography
0-2	None	Never	Never	Never	Never	Never
3-6	1hours/day	+	Never	Never	Never	Never
6-12	2 hours/day	+	Never	Never	Never	Never
13-18	2 hours/day	+	+	Into a 30 minutes /day	Into a 30 minutes /day	Never

## Եզրակացություն

«Ճատ իմաստության հետ շատ տրտմություն կա, և գիտությունն ավելացնողը վիշտ էլ է ավելացնում (Ժողովող 1.18) Բոլոր տեխնոլոգիաները, որոնք կատեղծվեն ապագայում, կկոչվեն երրորդ հազարամյակի կամ էլ XXI դարի տեխնոլոգիաներ: XXI դարը բեկումնային կլինի մարդկության զարգացման համար: Յետևաբար, վերը նշված խնդիրները պահանջում են բոլորի ուշադրությունը՝ փիլիսոփաների, տնտեսագետների, հոգեբանների, սոցիոլոգների, քաղաքական գործիչների և իհարկե մանկավարժների: Փոխակերպված միջավայրում, որտեղ երեխաներին մատչելի են նորանոր ծառայություններ ու փորձառություններ՝ նրանք մեծանում են իրենց ծնողներից տարբեր ձեւերով: Սա պատճառ է դառնում խզումների մեծահասակների ու երեխաների, ծնողների ու զավակների, ուսուցիչների ու սովորողների, այսօրվա սերունդների միջև, որ հանգեցնում է հասարակական մեծ փոփոխությունների: Տեղեկատվությամբ հեղեղված հասարակության մեջ տեխնոլոգիայի և մշակույթի միջև հարաբերությունները դուրս են եկել մեծահասակ սերնդի հսկողության շրջանակից: Արդեն ակներև է, որ տեղեկատվական դարաշրջանի առավել նշանակալից փոփոխությունները կկատարվեն հասարակական ոլորտում, կունենան ընկերային բնույթ եւ դրանց ակունքները արդեն առաջանում են այսօրվա երեխաների փորձառության մեջ: Ինչպես և պատմության ընթացքում կատարված ուրիշ մեծ փոփոխությունների ժամանակ երեխաները կլինեն գալիք տարիների շահողները կամ զոհերը: Ճատ բան, այդ թվում՝ նրանց դժվարությունները եւ պատեհությունները կախված կլինեն նոր միջավայրին հարմարվելու նրանց կարողությունից: Եթե մենք այսօր ի վիճակի լինենք հասկանալու այս փոփոխությունների բնույթն ու միտումները, գուցե և կարողանանք կայացնել մեր երեխաների ապագայի հետ

կապված լավագույն վճիռները: Ժամանակակից տեխնոլոգիաների ճնշման տակ կատարվող մանկան հոգեբանության փոփոխությունները առաջիկայում կարող են հանգեցնել լուրջ հետեւանքների թե՛ երեխաների, թե՛ նրանց ծնողների համար: Այդ խնդրով անհրաժեշտ է զբաղվել այսօր, հոգուտ ապագայի, հոգուտ երեխայի: Յոթ երանելին շեշտում է, որ Տերն է զավակներ տալիս (Յոթ 1.22): Արդ, մենք պատասխանատու ենք աստվածային այդ մեծագույն պարգևի համար, և հարկ է երեխաներին չզայրացնելով և չհուսահատեցնելով, ըստ աստվածային պատվիրանի (Կող. 3:21), բացատրելով հեռու պահել վատ ասվորություններից: Փորձեք նայել աշխարհին երեխայի աչքերով: Աստվածաշունչ մատյան 4. Մանտուլենկո «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում:

## **Գրականություն**

Մեթոդական ձեռնարկ « Դեռահասների առողջություն և զարգացում Երևան 2014

Բալյան Ա.Ա «Մանկավարժական հոգեբանության հարցեր» Երևան: Լույս, 1983,  
 Տամարա Դուբովկայա «Երեխան հեռուստացույցի մոտ»  
 Ալբերտ Նալչաջյան, «Հոգեբանության հիմունքներ»  
 Маршал Маклюэн, "Понимание медиа: внешние расширения человека"  
 Հեռուստատեսության պատկերազարդ պատմությունը( A Pictorial history of  
 Television»),  
 Սկզբնաղբյուր՝ Առողջապահություն (Մարիետա Կարապետյան  
 Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ,  
 Խաչատուր Գասպարյան - Միիթար Հերացու անվան ԵՊՀ բժշկական  
 հոգեբանության ամբիոնի վարիչ)  
 Վահրամ Միրաքյան «Ազդեցիկ հեռուստատեսության հետևանքները  
 Քրիս Ռոուանը (Cris Rowan ) «Are We Digital ummies» (Համարվում ենք, մենք  
 արդյոք թվային մանեկեններ)  
 Наталья Геннадьевна МЯКИННИК «Компьютер в жизни детей и подростков:  
 польза или Вре?»  
 Абульханова Славская КА- стратегия жизни М. 1991 Антон Платов. Дети и  
 родители Сеть. Мир компьютеров. - № 3. 2004 год  
 Гордеев А.В. Увлечение компьютерными играми. психологический аспект. К.  
 2004 I Н. КараН Е М СМН РОНегесКО 3, – М. - 1984 КурН С, М, Тсхоому  
 Hyperero  
 Рубинштейн С.Л. Основы общей психологии. М. - 1946